

մարզարտաշար տողերը գրում մի քահանայ՝ իւր պաշտօնակցի մասին. այլանդակութիւն...:

3. Վրաց գրականութիւնից № 6. է. ՆԻՆՕՁՎԻԼԻ. Գօղիա Ուրշիլի. (պտտմուածք) հրատա. Գ. Աանեանցի. Թարգ. Դ. Կ.: էջ 40 Թիֆլիզ 1905

Հայ բանիմաց համարակութիւնը, տարաբաղտաբար, շատ քիչ տեղեկութիւն ունի մեր դրացի և համարեան բաղդակից վրաց ազգի նոր և նորագոյն գրականութեան մասին. մենք դիտենք նրանց մի քանի անուանի բանաստեղծների ու լրագրների անունները և աւելի ոչինչ: Ի՞նչ գրական հոսանքների է ենթարկուած նրանց մատենագրութիւնը, ի՞նչ աստիճանի զարգացման է հասել նրանց վիպագրութիւնը, ի՞նչ իդէալներ են ոգևորում նրանց գրադէտներին — այս ըտլորը պարզ չէ մեզ համար: Սակայն շատ և շատ ցանկալի է, որ այս մութը մնացած խնդիրները պարզուէին. անհրաժեշտ է, որ նրանց աչքի ընկնող վիպասանների աշխատանքները թարգմանուէին վրացերէն: Գրական ծանօթութիւնը կնպաստէր նրանց և մեր ինտելիգէնտ շրջանների հոգեկան հաղորդակցութեանը և մտերմութեանը, որ այնչափ անհրաժեշտ է և այնչափ ցանկալի է համարում այժմ երկու կողմից էլ: Առանց այս հոգեկան հաղորդակցութեան դժժուար թէ հիմնական և տեւական բարեկամութիւն կարելի լինի հաստատել երկու ազգերի մէջ. ոգևորիչ ճառերը, լրագրական յօդուածները, ճիշտ է, նոյնպէս ներգործում են մտքերի վրայ, բայց դրանց ազդեցութիւնը անցողական, մակերևոյթային է, խոր արմատներ չի կարող ձգել:

Այժմ, մեր աչքի առաջ, այնպիսի ցնցող երևոյթներ են տեղի ունենում վրաց հասարակութեան ինտելիգենցիայի և մանաւանդ գիւղաբնակ դասակարգերի մէջ, որ մենք չենք կարող ըմբռնել, հասկանալ, եթէ տեղեակ չենք վրաց վերջին տասնամեակների մտաւոր զարգացմանը և նրանց ժողովրդի սօցիալական դրութեանը: Հայ ժողովրդի նման, վրաց ազգի մեծամասնութիւնն էլ երկրագործութեամբ է պարապում և շարունակ հողի հետ գործ ունի, հողի սակաւութիւնը, ինչպէս հայ գիւղացիների, նոյնպէս էլ վրացի երկրագործների մէջքն է կտրել և նրանք էլ մեր չարքաշ ռոանչպարներն են ման աղքատացել տնտեսապէս քայքայուել են: Հողի սակաւութիւնն էլ աւելանալով զանազան հարկերի շատութեանը և ուրիշ շատ պատճառներ գիւղական դասակարգի դրութիւնն անտանելի է

դարձրել, հետևանքն այժմ երևան է գալիս կովկասի դանազան-կողմերում:

Նինոզլիլին անն այս տնտեսապէս քայքայուած, յուսահատութեան դուռը հասած գիւղացու պատկերն է նկարագրում. «Գօգիայի հայրը կալուածատիրոջ ծառայելով մինչև նրա վերջին շունչը փչելը մօտը մնաց: Մահից յետոյ նա իր երեք որդիներանց՝ Գօգիային և երկու եղբայրներին ժառանգութիւն թողեց մի խարխուլ, փայտաշէն տնակ, մի Նալլիս (մեծ պահարան սիմինդրի համար), մի Ֆացիլա (ճիպոտներից հիւսած տընակ) և եօթ օրավար կոռ ու բէգառի, կամ ինչպէս իրանք են ասում՝ նադէլի հող: Գօգիան եղբայրներից բաժանուելով ստացաւ այս ստացուածքի մի երրորդ մասը...» (էջ 4—5): Ի՞նչ անի խեղճ Գօգիան եօթն օրավար հողի երրորդ մասով, ինչո՞վ կերակրի կնոջը, մանր երեխաներին. հարկե՞րն ինչպէս տայ. այդ դեռ բաւական չէ կարծես և անն գիւղացիներին մեղադրում են «թէ ձեր մէջ վնասակար մարդիկ էք պահում և դրա համար էլ էկզեկուցիա են նշանակել գիւղում», «հիւրաքանչիւր տուն տասը մանէթ պիտի վճարէ էկզեկուցիայի ծախսի համար: Փայտը, խոտը, սիմինդրն էլ առանձին: Ի՞նչ պիտի անէ թշուառ Գօգիան. կաղանդի նախորդ օրը գալիս է գզիրը՝ վեց կազակներով. Գօգիան երդում կրակն է ընկնում, որ կոպէկ չունի, բայց արժանանում է գզիրի հեգնութեանը. «Ձեռ կարող ճարե՛լ. ուռնների մօտ այդ չի անցնի. լոյժը դարիդուսն էլ է վարում», այդ հօ լսե՛լ ես. ճարել կը տան. լաւ է, անխօս տաս, սրանք խօսել շատ չեն սիրում» (էջ 17): Ղազախները դէպի խրճիթն են ներս խուժում, որ եղած-չեղածը հաւաքեն. Գօգիան արդէն չի կարողանում դիմանալ. «եկաք շունն սպանեցիք, իսկ հիմա էլ ուզում էք տո՛ւնս կողոպտել, ես ձեզ ցոյց կտամ,—գոռաց և ամուր կերպով հրեց այն ղազախին, որ այդ միջոցին ուզում էր տուն մտնել: Ղազախը գետին գլորուեց»... բայց շուտով Գօգիայի գլխին տեղացին թրի կոթի հարուածներ: «Վայ», ճչաց խեղճը և գետին փռուեց (էջ 18): Մարինէն, Գօգիայի կինը ուղղւում է ամուսնուն օգնութիւն հասնել. «սակայն խեղճ կնոջը ղազախները բռնեցին և յանձնեցին իրանց ընկերներից մէկին: Այս ընկերը արագով հարբած էր, նա տեսաւ թէ չէ Մարինէի գեղեցիկ դէմքը (նա դեռ երիտասարդ և բաւականին գեղեցիկ էր), սկսեց զօռով պաչպչել նրան: Խեղճը ճչում էր, աղաղակում և երկնքից ու աշխարհից օգնութիւն աղերսում. բայց օգնութիւն ոչ մի տեղից չէր հասնում (էջ 19): Գօգիային ու կնոջը տանում են գա-

ւառապետի մօտ, որ գոռում է նրանց վրայ. «Այ դու անզգամ
այ... տեսնում էք՝ ուզում են ապստամբուել. ես գիտեմ թէ
դուք ովքեր էք, սպասեցէք, ես ձեզ ցոյց կըտամ. բոլորիդ էլ
առանձին-առանձին կը քերթեմ»... (էջ 25). «Բաշ արուէք՝ այս
անզգամին և ճիպտոր երեսուն հարուած հասցրէք. իսկ յետոյ
երկուսին էլ բանտարկեցէք» (էջ 26):

Տնտեսապէս ընկճուած, գետնի հետ հաւասարուած Գօ-
գիան Ֆիզիքական պատիժ ստանալու բարոյական անպատու-
թեանը չկարողանալով դիմանալ անձնասպանութիւն է գործում
և նրա հրացանագարկ ղրակն էլ թաւալուում է զազախնների ձեռ-
քով սպանուած նրա հաւատարիմ շան մարմնի մօտ: Խեղճ Մա-
րինէն կորցնում է հոգեկան կարողութիւնը, խելագարուում է
անմիջապէս և դանակը ձեռքին իւր հարազատ զաւակների յե-
տեիցն է ընկնում, որ նրանց մորթի, որովհետև «երէկ գիշեր
երկնքից իջաւ ս. Բարսեղը, աասց, որ աշխարհը պիտի կոր-
ծանուի ու փախաւ»: (էջ 39):

Գօգիայի տունը աւերակ էր դարձել, միայն տան պատե-
րըն էին կանգուն մնացել. ասանիքը վաղուց փտել ու քան-
դուել էր»: (էջ 40):

Իրական է արդեօք նինօշվիլիի այս ողբերգական պատ-
կերը—թող ընթերցողն եղրակացնէ...:

ԲՐԻՉ

ՍՍԱՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ

- Ա. Տ. Տ. Դիմակներ. երգիծական արկածներ. (արտատպու-
թիւն չլուամայից) և ուրիշ տեղերից). Թաւրիզ, 1905 (50 կ.):
Է. ՆՆՆՕՇՎԻԼԻ. Գօգիա Ուիշվիլի. Թարգմ. Ղ. Կ. Թիֆլիս 1905
(8 կ.)
Ղ. ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ. Խաչատուր Աբովեանց. հրատ.
Լևոն Յովսէփեանի. Թիֆլիս 1905 (5 կ.)
ԱՐՇԱԿ ԱՔԱՅԵԱՆ. Միբոյ հովիտը. հրատ. Թիֆլ. Հր. Ընկ.
Թիֆլիս 1904 (3 կ.)
Վ. ՓԱՓԱՉԵԱՆ. Վիշապ և Ուրիշ զրոյցներ. հրատ. նոյն. Թիֆ-
լիս 1904 (5 կ.): Երկու թոչուն. հրատ. նոյն. Թիֆլիս
1905 (3 կ.)
Մելիք ԵՍԱՅԵԱՆ. Երազ. հրատ. նոյն. Թիֆլիս 1905 (3 կ.)
Մի բուլի... հրատ. նոյն. Թիֆլիս 1905 (3 կ.)
Ա. ԼԵՇԿԷ. Ուսման սէր. Թարգմ. ռուս. հրատ Տիկին Չաբելի.
Ս. Պ. Բ. 1905 (7 կ.)
Մ. ՍԵՐԱՕ. Մանկան մօտ, վերջին խօսք. հրատ. նոյն. Ս. Պ.
Բ. 1905 (7 կ.)
A. C. ДАГБАШЬЯНЪ. Полный русско-армянский словарь.
вып. IV, V, VI и VII. Тифлисъ 1904